

եկեղեցականությունը միշտ մնալ հանրության նախանձախնդրության առանցքը: Հայաստանեայց եկեղեցին, որի որմերը նահատակների արիմով են շաղախուած եւ որի գմբէթները գոհողութիւնների աննախընթաց դրոշմովն են օծուած, իրաւունք ունի ակնկալելու, որ իր առաջնորդները ամէն բանից բարձր կը բռնեն իրենց անձին բարոյական պատկառանքը, ներշնչել յարգանք ու ակնածանք օրինակելի լրջութեամբ: Ժամանակի տիրող մտայնութիւններից է նաեւ այն հանգամանքը, որ Հայ եկեղեցին կորցնում է իր աղօթատեղիի իմաստը եւ դառնում արարողական եւ ծիսակատարական սովորութիւնների կատարման վայր, մի հանգամանք, որ նսեմացնում է նաեւ եկեղեցու բարձր գաղափարականը, շփոթելով այն իր կրօնական ոգւովն հետ:

Բացայայտօրէն համոզուած ենք թէ մի ազգի բարոյականը որքան իր քաղաքական կեանքից, նոյնքան էլ իր եկեղեցական կեանքից պիտի ճանաչուի, իսկ եկեղեցին էլ իր ներկայացուցիչներից: Հայ եկեղեցականը չի կարող անտարբեր մնալ այն կենսական հարցից մանաւանդ որ իրեն վիճակուած է առաջնորդել, ներկայացնել բարոյական կեանքը, տիրող մի կրօնքի հովանիին տակ, որ մաքրութեան, հեգոթեան, խոնարհութեան պատգամը ունի իր շրթների վրայ: Հենց այս պատճառով էլ Ներսէս Ծնորհալի հայրապետը իր Ընդհանրական Թուղթի մէջ հալ եկեղեցին ու եկեղեցականությունը համարժէք անկատելով հրամայում է. «Նոտեցցին այնորիկ որ ընտրեալ են արծաթով» /Կը մերժուեն նրանք, ովքեր արծաթով են ընտրուած/ (Սաղմոս ԿԷ:Յ1)

Ընթացածնայ Մայր Աթոռը, որ ցարդ գերագոյն նեղիմակոյթեամբ վարում է Հայ Առաքելական եկեղեցու վերին իշխանութեան դերը, չպիտի կորցնի իր ընդհանրական հովուապետի եւ սրբազան գահակալի իր հոգեւոր հմայքը ու դիրքը: Հայ եկեղեցու ուղղափառ դասանութիւնները անքակտելիօրէն կապուած են լուսաւորչական գահին եւ իր համապիտո հաւատացեալները իրար մօտ, իրար մէջ, եւ իրար համար են ապրում: Այս միաբը Սուրբ Հայրապետ Ներսէս Ծնորհալին խտացնում է այս պատկերի մէջ.

«Քանզի եթէ Սուրբ Հոգու շնորհներն Ահարոնի գլխին են իջնում, որ հայրապետութիւնն է, եւ գլխից՝ մօրուքին, որ եպիսկոպոսութիւնն է, մօրուքից՝ գրապանակներին, որ քահանայութիւնն է, եւ գրապանակներից՝ զգետտին, որ ժողովուրդն է, արդ, ո՞ր շնորհի իւրը կարող են ունենալ նրանք, ովքեր օտարացած են անարունեան գլխից եւ իրենց գործով միացած են Դադաւանին եւ Աբիլոնին» (Սաղմոս ԸԼԲ 2, ԹԻԻ-Բ ԺԶ):

**Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք Ի  
Զ Ա Յ Ն**

**VOICE OF CONSCIENCE**

Rev. Dr. V. N. Nersessian ԹԻԻ 2 Տ. Ն. Ա. Քչնյ. ներսէսեան  
London, England Փետրուար, 1995 Լոնտոն, Անգլիա

**"REJECT THOSE WHO ASPIRE TO BE ELECTED BY SILVER"**

In the year 1165, when Grigor III Pahlawuni had reached a good old age, and had been catholicos for a period of fifty three years (1113-1166), he ordered a general meeting at Hromklay and nominated a successor to the catholicate. Grigor III Pahlawuni annointed his brother Nerses Catholicos of All Armenians, who after the death of the former ascended the throne of Saint Gregory the Illuminator as His Holiness Nerses IV Klayetsi, called Shnorhali "filled with grace" (1166-1173). To promote the spiritual well being of his flock, at the early part of his catholicate he addressed a general epistle to the Armenian people called T'ught' Endhanrakan (Encyclical Letter). In this letter, after mentioning the death of his brother Grigor Pahlawuni, and taking a short view of the relative duties imposed upon him by his being elevated to the catholicate, he states the orthodox creed of the church of Armenia, which is immediately followed by perceptive exhortations "to the entire Armenian people". The letter is divided into different sections, the third of which is addressed to the bishops of the church. The immediate object of the writer was to excite a love of virtue and piety amongst his congregation, and to be instrumental in eradicating from their minds such unwholesome principles, as are calculated to render human nature waste and deformed.

In this letter Saint Nerses Shnorhali speaks in great detail about the office of the bishop, its origins (Gospel of St Luke 24:50) in the Bible and its responsibilities. The emphasis is put on their conduct, which is best defined according to Saint Nerses by St Paul's in his Letter to Timothy.

"Now a bishop must be above reproach, temperate, discreet and courteous, hospitable and a good teacher; not a heavy drinker, nor hot-tempered, but kind and peaceable. He must not be a lover of money (I Timothy 3:2-4).

Those who are immature spiritually and physically should not be called into the office of the bishop least "pride might turn his head" (I Timothy 3:6). Saint Nerses Shnorhali takes each of the above mentioned attributes separately and explains how important they are for the office of the bishop in the light of the Gospel teachings.

Armenia in the nineties and beyond is going to be a secular state. The role of the Church is a powerful one and should not be confined to the rituals of "hatch, match and dispatch" (i.e. Baptism, marriage, burial). Nobody looking at the moral vacuum of a consumer society, the huge gaps left by the withdrawal of the state from community care and support, can doubt the potential role of the church. It is also a church that is increasingly at odds with the paraphernalia of rituals, and overdressed bishops blessing philandering benefactors. Surely with public respect so diminished an oringingly dutiful compliance can no longer be demanded. According to Saint Nerses Shnorhali, what is required for the church then and now is not a misbehaving subaltern but a bishop of the church interpreting the demands of the Gospel. It is not just misdemeanours nor the self-indulgence of the bishops, but the flaccid leadership offered by those whose office includes the guardianship of moral values. The good health of the catholicate does not only demand that the candidates live by the rules which make for a good community but also the ones to which every member of the church must aspire. It is not disbelief that threatens the church but unbelief.

To prevent the church from plunging into embarrassing scandal and low public national and international esteem "reject those who aspire to be elected by silver" (Psalms 68:31-32). Saint Nerses Shnorhali employs a very powerful image to impress upon his contemporaries that at a time when our lives are incessantly transformed by relentless change, communities are embodied in enduring institutions which must be protected. During the enthronement service before God the newly elected catholicos takes solemn vows at which time " the graces of the Holy Spirit will descend on the head of Aharon, which represents the catholicate , and then from his beard, which represents the bishops synod, thence from his beard to his collar (vakas) which is the priesthood, and finally from his collar to his robes, which is the people" (of. Psalm 133:1-2).

## «ԽՈՏԵՍՅԻՆ ԱՅՆՈՔԻԿ ՈՐ ԸՆՏՐԵԱԼ ԵՆ ԱՐԾԱԹՈՎ»

1165 թուականի ապրիլի 17-ին, Ծաղկազարդի կամ Արմաեհեաց կոչում տոնի օրը Հռոմկլայում հրատիրուեց Կիլիկիայի եւ Միջագետքի հայ եկեղեցու հոգևորականների համագումար՝ Ներսէսին կաթողիկոս ընտրելու համար: Հռոմկլայի բազմամարդ ժողովում Ներսէս Ընորհալին դիմելով «առ եպիսկոպոսունս եւ վարդապետս, եւ հասօրէն դասս եկեղեցոյ» արտասանեց մի ճառ: Իր խօսքի սկզբում նա գովասանքով է ցոյց տալիս եղբօր գործունէութեան լաւ կողմերը, որպէս հոգևոր հայր եւ ազգային գործիչ՝ նրա անձնական առաւելութիւններն ու արժանիքները եւ այսպէս համեստութեամբ շեշտում իր անարժանութիւնը կաթողիկոսական ծանր պարտականութիւնների ու բարձր պաշտօնի համար:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մեզ համար նուիրական ու պաշտելի հաստատութիւն է: Այդ մնասին մենք օտարների կարծիքը ունենալու կամ մտրպալու կարիքը չունենք: Բոլորից աւելի ու բոլորից առաջ հայ ժողովրդի զաւակներով գիտենք, կը զգանք ու կ'ըմբռնեն այդ փառաւոր ու անզուգական հաստատութեան հոյակապ կեանքը ու պատմութիւնը: Դրա համար էլ, կաթողիկոսական նոր ընտրութեան առիթով, մեր պարտ ու պարտականութիւնն է յաւերժացնել ու զօրացնել այդ պատմական ու պատմական շքեղ հաստատութեան հիմքերը՝ նրան փոխանցելով «շունչ կենդանի»: Համոզուած եմ, որ կարելի չէ ցանկացած եւ երազած բարեկարգութիւնն ու զօրացումը ձեռք բերել, առանց շարժումի կամ հիմնական շատ լուրջ ու մտածուած քայլերի:

Ներսէս Ընորհալին գտնում է, որ իր ժամանակի եպիսկոպոսներից շատերը իրենց պաշտօնը ձեռք են քերում զանազան ճարպիկ միջոցներով ու կաշառքով: Ընորհալին բացառապէս կաթողիկոսի հոգեբանական եւ բարոյական նկարագիրը առանցքային նշանակութիւն է տալիս Պօղոս առաքեալի այս խօսքին.

«Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, ճեզ՝ ցած, պարկեշտ, հիրաւետ, ուտոցիչ. մի թշնամանօղ, մի հարկանօղ, այլ հանդարտ. մի կոռօղ, մի արծաթասէր...» (Տիմոթէոս Առաջին Գլ. Գ:2,3):

Հայաստանը 20-րդ դարի աւարտին գնալով դառնալու է առաւել աշխարհիկ հասարակութիւն: Հայ ժողովրդի այն անխորտակելի նկարագիրը, որով մահում եւ յարութեան խաղն է խաղում պատմութեան բեմի վրայ, ունի նաեւ արդար հրամայական ցանկութիւն այս պահին տեսնել իր եկեղեցին որպէս վերագաթնումի եւ բարոյական կեանքի առաջապահ ջահակիրն, եւ իրեն վստահուած հոյակապ դերի մէջ ժողովրդի ունի նաեւ իրաւունքը պահանջելու, որ իրեն ներկայացնող